տովանուել, որ նորա իւրեանց գրութիւնից օգուտ քաղել չը գիտեն։ Նորա ապրում են մի այնպիսի երկրում, ուր տիրող ազգը, թէ սովորութիւններով, և թէ ազգային այլ յատկութիւններով, բոլորովին տարբերվում է իւրեանցից։ Նորա ապրումեն մի այնպիսի երկրում, ուր տիրող ազգը, թէ իւր թուի բազմութեամբ և թէ իւր մտաւոր և նիւթական գործունէութեան մէջ, խիստ ստոր աստիճանի վերա է գտանվում, քան թէ հպատակ ազգերը։

Հայը, եթէ կարողացաւ պահպանել տաճկաստանում իւր կրօնքը, իւր ազգային գոյութիւնը, դարանով նա պարտական է մասնաւորապես շրջափակ, խորութիւն դնող և հաւատաւոր բնաւորութեանը։ Հայը, եթէ վայելում է ազատութիւն իւր ազգային հիմնարկութիւնների մէջ, դարանով նա պարտական է տիրող ազգի զեռ մանուկ քաղաքական զարգացմանը։

Իսկ այդ ազատութիւնը ժամանակաւոր է։ Նա երկար չը պիտի տեւէ։ Իսկ Հայը կարողանում է օգուտ քաղել նորանից։

Այդ հարցի պատասխանը կը գտանէ ընթերցողը իմ առաջին նամակի մէջ, 1) ուր թէ և համառօտ, բայց մի ընդհանուր տեսութիւն էի արած Կ. Պոլսի մտածող ազգայինների գործունէութեան մասին։

Այս անգամիս հարկաւոր եմ համարում քննել մի քանի մասնաւոր երևոյթներ։

Համարեա ամէն օր, ամէն շաբաթ չողենաւը բերում է Կ. Պոլիս փոքր Ասիայի զանազան գաւառներից մի խումբ հայազգի պանդուխտներ, որք, թողելով տուն, տեղ, ընտանիք, գալիս են այս քաղաքը, որ մշակութիւնով, համբաւութիւնով, մի քանի դուրուչ փող վաստակեն, տանեն իւրեանց չքաւոր ընտանիքը պահեն։ Թէ և խիստ սակաւներին այդ թշուառներից յաջողվում է ազնութեամբ իւրեանց հայրենիքը դառնալ

Կ. Պոլսի ազգային վերնագիրը իւր ճակատին հպարտութեամբ կրող լրագրութիւնը մինչև այսօր չը քննեց բուն պատճառը այդ վիճակաւոր գաղթականութեան. Բայց մի քանի մասնաւոր խօսքերից,—«Ըչտէ քուրդերը կը թալանեն կոր։»—«Ըչտէ չէրքէզները աւազակութիւն կընենն»։—«Ըչտէ ֆիլան փաշան աղէկ զօնուշվիղ չըլլար կոր»։

Քուրդերի, Չէրքէզների և այլ դոցա նման ազգերի վիճակաւոր յարաբերութիւնը Հայերի հետ, և նոցա հաղթահարութիւնները ժամանակաւոր մի բան են։ Դոքա չեն և չեն էլ կարող Հայերի գլխաւոր անբախտութեան պատճառ դառնալ։ Որոյ ընդհակառակն մեք պնդում ենք, որ այդպիսի ազգերի գրացութիւնը առաւելապէս նպաստում է Հայերի բախտաւոր ապագային։

Մեր խօսքը ապացուցանելու համար օրինակ առնենք Վասպուրականի և Տարօնոյ նահանգները։ Քուրդերին մեք գտանում ենք այդ երկրներում մի թափառաշրջիկ, ստանդարտական ազգ, առանց հիմնաւոր բնակութեան, որ իւր ապրուստը գտանում էր միայն խաշնարածութեան մէջ։ Այդպիսի ազգերը շատ բնական է, որ օտարանում են հողից և նորա մշակութիւնից։ Այդ իսկ պատճառաւ երբ տէրութիւնը առաջարկեց տեղային բնակիչներին հողերը թափիա 2) անել, գլխաւորապէս Հայերին մնաց երկրի ընդարձակ դաշտերը, իսկ Քուրդերը չը կարողացան այնտեղ հիմք ձգել։

Վասպուրականի հանդուցեալ Արծիւը «Ազգ... հայրենիք... հայաստան»... գոռալով, կամենում էր Հայկի և Արամի անցեալ յիշատակներով միայն կերակրել սոված ժողովուրդը, չը մտածելով որ, մարդը իւր կեանքի գոյութիւնը պահպանելու համար կարօտ է նիւթական մասնաւոր կայական քամիների։ Այժմեան լրագրութիւնը միակ ճարը գտանում է գաղթականների, ուսման և կրթութեան մէջ, չը մտածելով, որ լոկ այր բեմը քաղցած փորին կերակուր չի տալ։

Կ. Պոլսի հայ մտածողները չը կարողացան մինչև այսօր իրենց ուշադրութիւնը դարձնել այն առարկայի վերա, թէ մի ազգի իւր գոյութիւնը պահպանելու գլխաւոր պայմաններից մինը է հողը և նորա մշակութիւնը։ Թէ մի ազգ, որ իւր կեանքի պահպանութիւնը չէ հիմնած հողի արդիւնաբերութեան վերա, նա ոչ միայն երկար ապրել կարող չէ, այլ և չէ կարող ազգ համարուել։

Գաղթականութեան հոսանքը զէպի մեծ քաղաքները, որ ամէն տարի հազարաւորներին խըլում է հայրենի հողի արմատից, պատրաստում է հայերից ժողովրդի մի դաս, բոլորովին անպիտանացած ազգայնութեան մարմնի մէջ։ Մի ազգի գլխաւոր հիմքը է հողը, իսկ նորա գլխաւոր ուժը գտանվում է երկրագործ և արդիւնաբերող դասի մէջ։ Սպառող դասը մի անհրաժեշտ մկրնայ է այդ կազմակերպութեան մէջ։

Իսկ գաղթականութիւնը շարունակվում է։ Ժողովուրդը օրըստօրէ հեռանում է Հայաստանի կենդրոնից։ Նորա ուժերը ցրվում են և հայրենեաց դաշտերը մնում են ամայի, դատարկացած։

Ինչով կարելի է այդ հոսանքի պատճառը բացատրել։

Երկու բանից մինը պէտք է լինի, կամ Հայերը ընդունակ չեն երկրագործութեան մէջ, կամ եթէ ընդունակ են, նոցա մշակութեան արդիւնաբերութիւնը այնքան օգուտ չէ բերում, որ կարողանային ապահովել իւրեանց ապրուստը։

Վերջին պատճառը աւելի հաւանական է։ Շարունակ սովորական, և միատեսակ ընտեղէնների վարուցանքը, մշակութեան նահապետական ձևերը, երկրի չափազանց էժանութիւնը, եթէ աւելացնենք դոցա վերա տէրութեան, ինքն ըստ ինքեան թեթև, բայց արդիւնաբերութեան համեմատ ծանր հարկերը։—մեք կը տեսնենք որ երկրագործին աւելի ոչինչ չէ մնում իւր ապրուստը ապահովելու։

Գիւղատնտեսական ուսումնարանը, որ միակ ճարն է այդպիսի դէպքերի առաջն առնելու, դեռ ևս չէ հեռաբերում Կ. Պոլսի լրագրութեան ուշադրութիւնը։—

—Երկրի հում բերքերը արուեստագործելու համար արուեստագիտական ուսումնարանների մասին նա մտածել անգամ չէ ուզում։

—Երկրի մթերքը վաճառահանելու համար, Տրապիզոնից Արզերում, այնտեղից Վան, Վանից Մուշ, մինչև Մուսուլ և Բաղդատ երկաթուղի չմնելու հարցը բարձրացնել չէ ուզում, որովհետև կենդրոնական Ասիոյ խնդիրը նորան չատ է զբաղեցրել...

—Մշեցի, Բաղէշցի կամ Վանեցի Հային մի վաչառու Քրդից, կամ Տաճկից, հարիւր զուրուչ փոխ առնել, և չուտով մի քանի հարիւր պարտական մնալ, այնուհետև իւր կինը, ընտանիքը զբաւ թողնել, Պոլսի սոխախներում տարիներով փթել և մաշուել,—այդ երևոյթները նորան չեն գրաւում որ գիւղական փոխատու ընկերութիւնների վերա մտածէ։ Որովհետև նա չատ պարապուած է նորանով, որ գիտենայ դեռ ևս ինչ երազներ է տեսնում Բիսմարկը իւր անկողնի մէջ։

Ահա բոլոր դատարկութիւնը Պոլսի լրագրութեան որ մեք յիշեցինք մեր առաջին նամակում, մնացորդը խոստանում եմ գրել յետոյ

Մ.

1) Տես Մշակի № 9

2) Թափիա։ Տէրութիւնը, թէ այդ և թէ փոքր Ասիայի զանազան գաւառներում, անպտղաբերացնելով իւրեան զանազան բանակների տիրած հողերը, խիստ էժան գնով վաճառեց երկրի բնակիչների վերայ։ Դա կոչվում է թափիա։ Թափիա արած հողը համարվում է անպտղաբերութիւն, տէրը կարող է վաճառել, գրաւ դնել և վարուել նորա հետ, որպէս իւր կամքն է։ Միայն նորա մահից յետոյ ժառանգը պիտի յայտնէ, թէ ինքը կամէր մշակել տար թողած հողերը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

„Մեղու Հայաստանի“ լրագրին հաղորդում են որ „Մշակի“ 7-որդ համարում տպված լուրը գործակատար Դ...եանցի պսակի համար յիսուն բուրլի պահանջելու վրա՝ սխալ է։ Ահա լրագրի խօսքերը՝

Սխալ ենք ասում, որովհետև ինչպէս ինքը արժ. Դ...եանցը հաղորդումէ, ահա իրողութիւնը։ Մի սամսունցի օտարական երիտասարդ լուսաւորչական ձեւանալով, նշանադրվում է Սիմէոն քահանայի ծխոց մի օրիորդի հետ և խնդրում է քահանայից, որ իրան պսակէ։ Գործակատարը համաձայն օրինաց պահանջում է 12 անձանց վկայութիւն անվաւէր, որև առաքվում է Ախալցխայի հոգևոր կառավարութեան, բայց առանց սրանից պատասխան սպասելու, երիտասարդը գնում է Ալաստան գիւղը և պսակվում է կաթոլիկ քահանայից։ Այժմ վերոյիշեալ խաբեայ երիտասարդը, որ դաւանութեամբ կաթոլիկ է եղած, անցայտացել է, որոյ մասին գործը շարունակվում է այժմ մարմնաւոր դատարանում, թէ նա ով է և որտեղից է եկել։

***

Тифлисскій Вѣстникъ ռուս լրագիրը քաղուածք անելով „Մշակի“ առաջնորդող յօդվածից արվեստագործական ուսումնարանի մասին (№ 6), ծաղրական կերպով յարձակվել է տեխնիկական ընկերութենից ներկայացրած պրօեկտի դէմ։ Մի և նոյն ժամանակ վրաց „Դրօէբա“ տպում էր իր էջերում „Մշակի“ առաջնորդող յօդվածը, ակնարկելով թէ ինքն չէր հաւատայ այդ տեղեկութիւններին, միայն մի բան սխալում է հաւատալ, այն է՝ որ մինչև այժմ քաղաքային վարչութիւնը չէ հերքել „Մշակի“ տարածված լուրերը։ Тиф. Вѣст. լրագրի յօդվածը յարուցեց մի պատասխան, Кавказъ լրագրի կողմից, որի ոճից և ոգուց երևումէ որ գրողը եղել է նոյն իսկ պրօեկտ մշակողներից մինը...և ինչ...„Մշակից“ յայտնած լուրերը, ուաղ, ճշմարիտ են...։ Խնդրում ենք մեր ընթերցողներից նորից ուշադրութեամբ կարդալ „Մշակի“ 6-որդ համարը։

***

Կարդալով Մեղուի № 7 համարում պարոն Խ. Գրիգորեանի մի քանի տողերը, կարծեցի թէ իմ յայտնած միտքը սխալ է Ուրմիոյ կանանց մասին, ես, ամենայն կրիտիկայից ստոր դասելով պարոնի կարծիքը, հարկաւոր չեմ համարում պատասխանել։ Միայն խորհուրդ եմ տալիս պ. Գրիգորեանին փոքր-իշատ կարդալ սովորել և նորից ընթերցասիրել Մշակի № 50 համարում իմ տպուած նամակը, այն ժամանակ նա իւր պատասխանը կը գտանէ նոյն նամակի մէջ, թէ իմ խօսքերը Ուրմիոյ կանանցը չեն վերաբերում։ Բաֆֆի։

***

Ընթերցողը արդէն գիտէ, որ Թիֆլիսի քանի մի հայ կանայք և օրիորդներ գիտաւորութիւն ունեն մի հայոց ամսագիր հրատարակել։ Մենք չը գիտենք որքան աջողվելու է այդ ամսագիրը, բայց կարծում ենք, որ դժուար է միայն սկսել, իսկ նիւթերը երբէք պակաս չեն լինի։ Բանասիրական մասում, բացի Նոր գրվելու պիպասանութիւններից (ինքնուրոյն և թարգմանական), նիւթը արդէն պատրաստ է՝ հարկաւոր է վերցնել միայն մեր ամենալաւ բեմական գրվածները, ինչպէս հանգուցեալ Տէր-Գրիգորեանցի պիէսները և նմանապէս Գաբրիէլ Սունդուկեանցի գրվածները։ Պատմական մասում մեծ օգուտ կը բերեր կանանց կրթութեան պատմութիւն, իսկ նամակագրութիւնների կողմից, սկսած մեր դաւառներից մինչև Ցիւրիխի համալսարանը, մենք համոզված ենք, որ թէ օրիորդների տարբերական ուսումնարանների թէ բարձր ուսման վերաբերութեամբ թղթակցութիւնները երբէք չէին պակասի...

***

„Kölnische Zeitung“ լրագիրը հաղորդում է մեզ, որ Կ. Պոլսում հրատարակվում են այս բոպէիս թուրքերէն լեզվով 12 լրագիր, հայերէն լեզվով 12, յունարէն 10, ֆրանսիարէն 10, անգլիերէն 2, և բոլգարերէն 2.

Գերմաներէն թերթը չէ աջողվում մինչև այժմ։

Ա Ռ Ե Ւ Տ Ր Ա Կ Ա Ն

ԹԻՖԼԻԶԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Մարտի 14-ին)։

ՈՍԿԻՆ. (պօլուիմպէրիալ). . . .	6 ռ.	7 կ.	
ԲԱՄԲԱԿԸ Երևանու.	4 „	50 „	
„ երկրորդ տեսակը. .	4 „	40 „	
„ Ամերիկայի սերմից.	6 „	70 „	
ԲՈՒՐԴԸ թուչի	7 „	90 „	
„ „ երկրորդ տեսակը	7 „	40 „	
„ թարեքեամի	4 „	— —	
ՇԱՔԱՐԸ Ռոսի (Բրօցկու)	7 „	70 „	
„ „ միւս տեսակը . .	7 „	50 „	
„ զագրանիցու տրանսիդ.	5 „	50 „	
մաքսը վճարած . . . . . ,	8 „	70 „	
ՇԱՔԱՐԱԻԱԶԸ Ռոսի.	6 „	40 „	
ԴԱՀՎԱ Լիվանի լաւը.	14 „	50 „	
ԴԱՀՎԱ Մոխո, չատ լաւը . . .	15 „	60 „	
„ Մարտինիկոյի, ցածրը .	12 „	50 „	
ԱԼԻՒԻՐԸ Երևանի առաջին տեսակը.	1 „	60 „	
„ „ երկրորդ տեսակը	1 „	55 „	
ԱԼԻՒԻՐԸ Գանջու հասարակ . .	1 „	80 „	
„ Շորագեալու	1 „	60 „	
ԳԱՐԻՆ Երևանի.	1 „	10 „	
ՊԱՊԵՂԸ	11 „	70 „	
ՇԻՐԲԱԽՏԻ ձէթ.	9 „	70 „	
ՄՈՄ	12 „	30 „	

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՎԱՃԱՌԱՆՈՑ

ՓՈԽԱՆԱԿ. բարաթ պօլս. . . վճա. . . 6—75
„ „ Թաւրիզում վճա. . . 4—80
ՄԱՐՍԷԼ և Փարիզ, 100 բուբլին ածէ. . 346 ֆր.
ԼՕՆԴՕՆԻ վերա, (Օդէսայի կուրսը)
7 բուբլի 34 կոպէկը ածէ . . . . 1 լիրա.
ՄԱՐՍԷԼՈՒՄ բամբակի 50 քիլօ
(3 փութ 2 գրվ.) ծախվում է . . . 73 ֆրանկ.
ՄԱՐՍԷԼՈՒՄ Երևանու Ամերիկ. սերմի բամբակը ծախվում է . . . . 97 ֆր.
ՄԱՐՍԷԼՈՒՄ թուչի սպիտակ բուրդը ծախվում է . . . . 103 ֆր.
„ գառան բուրդը ածէ . . — —
„ թարաք. բուրդը ածէ 75 ֆր.
„ Ղարաբ. բուրդը ածէ 60—65 ֆր.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ։

(Մարտի 2-ին)

ԼՕՆԴՕՆ.—մի ռուբլի ածէ 32²³/₃₂ պէնս (փոխանակ 40 պէնս)։
ՓԱՐԻԶ.—մի ռուբլի ածէ 347¹/₂ սանտիմ (փոխանակ 400 սանտիմ)։

Առաջին ներքին 5% փոխառութեան տոմսակ			154%
երկրորդ			151%
5% Բանկի տոմսակ	„	1 յունվարի	95
„ „	„	2 յունվարի	94
„ „	„	3 յունվարի	—

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„АГЕНТСТВО ДВИГАТЕЛЬ“

„Դվիգատել „անվանված գործակատարութիւն, ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատված ցամաքի գետերի և ծովի վրա ապահովութեան և բեռներ տեղափոխվելու ընկերութիւն, ընդունում է ամեն տեսակ բեռներ և ապրանք թէ Ռուսաստան թէ Արտասահման ուղարկելու և նոյնպէս փոխ է տալիս նրանց գրաւականով գումարներ։

Կօնտօրան (գրասենեակը) գտնվում է՝ Ս. Լուսակում, Խատիսովի տան, և Թուրքի մէյդան վրա Շադինովի քարվանսարայում։

Նոյն տեղ գտնվում է և Ռուսաց 2-որդ կրակի դէմ ապահովութեան ընկերութեան բաժանումն որ ապահովում է թէ շարժական թէ անշարժ կայքեր, ինչպէս Թիֆլիսում նոյնպէս և Անդրկովկասի այլ քաղաքներում։

Գործակատար Պէպինով.

Ունիմ պատիւ յայտնել Տփխիսոյ յարգոյ հասարակութեան, որ ներկայում ծախում եմ լօտ որ իւրաքանչիւր լօտոն կը բաց կացնի 63 հոգոյ խաղը. գինն է մանէթ։ Ցանկացողը կարող են դիմել Գերէթելի տպարան և հարցնել Վանօ Կալատոզովին։

ОБЪЯВЛЕНІЕ

По случаю отъѣзда хозяина ПРОДАЕТСЯ очень дешево ДВУХЪ ЭТАЖНЫЙ ДОМЪ СЪ ДВОРОМЪ въ 100 САЖЕНЕЙ, на Давидомъ на Чавчавадзевской улицѣ, противъ Цукіанова. О цѣнѣ спрѣсить въ редакціи газеты „ДРОЭБА“ у Эфимія Хеладзе.

ԾԱԽՎՈՒՄ է քաղաքում (Սօլոլակում) 500 ժէն տարածութեամբ մի հող, գնի մասին կարելի է տեղեկանալ Կ. Կրիժանովսկու տանը, Սուլի փողոցում Թիֆլիսի մէջ։

Дозволено Цензурою. Тифлисъ, 14 Марта 1873 г. Գերէթելի և ընկ. (նախկին Դուբէլիրի) տպարան Խմբագիր—հրատարակող Գրիգոր Արծրունի